Digitally signed by AZATYAN ANNA 7910720130
Date: 2022.09.16 15:18:26 AMT

Դասղեկի թեմատիկ պլանավորում

Դպրոց_____Նորաշենի միջն. դպրոց

Դասարան_____9-րդ

Դասղեկ_____Ն.Մանուկյան

Հաշվի առնելով և' ժամանակակից դպրոցի սաների հետ աշխատելու դժվարությունները, և' տարիքային շրջանի հետ կապված դժվարությունները, և' դասարանի անհատական առանձնահատկությունները, որպես դասղեկ,նախընտրում եմ ,,Դասղեկի ժամ ,, դասաժամերը կոչել բարոյագիտության և կյանքի դասաժամեր:

Ներքևում նշված թեմաների ցուցակը միանգամայն փոփոխական է, քանի որ նպատակս է ուսումնասիրել երեխաների վարք ու բարքը և նկատված թերացումները վերացնել ու բացառել: Ընթացքում դասարանի վարքագիծը, ուսումնական առաջադիմության մակարդակը, կամ որպես աշակերտ նրանց պահվածքը կարող են նոր նպատակներ ծնել և թելադրել նոր ոճով ու թեմատիկայով աշխատանք:

Դասի համարը	Դասի թեման
1	Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում, առաջարկությունների արկղիկի պատրաստում:
2	Հայրենիք, ազգ, մայրենի լեզու: Ինչքանո՞վ ենք յուրաքանչյուրս պատրաստ պահպանելու մեր ազգային որակները:
3	Իմ բնակավայրը
4	Հավատ, գաղափարախոսություն, պատմություն և ժամանակ:
5	Հայաստանի հուշարձաններ: Ո՞ւր կուզենայի գնալ հաջորդ ուսումնական էքսկուրսիայի ժամանակ:
6	Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը: Փոխըմբռնում:
7	Նյութապաշտություն և շահ: Անշահախնդիր նվիրում:
8	Ճակատագի՞ր, թե սեփական բախտի տնօրինում:
9	Հոգու կրթություն:
10	Հոգու կրթություն և մտքի թռիչք:
11	Ոսկե աշնան գույներն իմ խոհերում:
12	Աշնանային էքսկուրսիա : Դիտել ներկայացում Պարոնյանի անվան թատրոնում:
13	Էքսկուրսիայից ստացած տպավորության քննարկում, ներկայացման վերլուծություն:

14	Տարբեր սերունդների անխուսափելի բախումներ և դրանց ճիշտ հանգուցալուծումները:
15	Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում:
16	Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ: Դասարանի ձևավորում:
17	Հայրենի'ք,ես զարկն եմ քո բազկի:
18	Հայոց բանակ
19	Մարմնակրթություն, առողջապահություն:
20	Հիգիենիկ հարցեր:
21	Մարդկային արատներ:
22	Մարդկային արատներ:
23	Բարոյական արժեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը:
24	Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով:
25	Սերը որպես տիեզերական զգացմունք:
26	Հանճարները սիրո մասին:
27	Սերը ոգեշնչման աղբյուր:
28	Խրատանի, առածանի, մեկնաբանություններ:
29	Ինքնատիրապետման մի քանի հարցեր:
30	Հայոց Ցեղասպանություն: Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ:
31	Հաղթանակների ամիս մայիս:
32	Քչերը գիտեն, շատերը չգիտեն(հետաքրքիր տեղեկություններ):
33	Ո՞րն է իրական գեղեցկությունն ու հմայքը:
34	Ամփոփիչ դաս: